

Նոյն միջոցին Սելճուկները, որ Սիր Դարիայի ամբլ թողնով իրենց յաղթական արշաւի առաջին կայանը Մերվը ըրին, Թրքութիւնը տարին դէպի հիւսիսային խորասան, որ այսօր ալ Թիւրքիստանի մաս կը կազմէ:

ԺԳ-րդ դարու սկիզբը Իսլամը անկարող եղաւ Ձէնզիղ Խանի բանակին դէմ զինու զօրութեամբ պահել այն դիրքերը, զորս զբաւած էր—այսօր Քըրզըղեան կոչուած տարաստաններուն մէջ:

1219ին Թուրքիստան ինկաւ Ձէնզիղ Խանի տիրապետութեան տակ. 1236ին Վոլգայի Իսլամը կը նուաճուէր Բաթու Խանէն (Ձէնզիղի թոռը), որ ամբողջ Ռուսաստանի աշխարհակալութեան ձեռնարկած էր:

ԺԳ-րդ դարու կէսին միայն պարտուած Իսլամը կը յաջողի իր յաղթականին պարտադրել իր մշակոյթը:

Ձէնզիղ Խանի մեծ որդւոյն, Ջիւջիի, ինչպէս նաեւ երկրորդ որդւոյն Ջղաթայի յաջորդ վեհապետները կ'ընդունին իսլամութիւնը: Ալթին Օրդուի մէջ (Ոսկի Հորդա) որ Ջիւջիական կայսրութեան մէջ զեկաւար զիրք ունէր, Բերքայ Խանը 1256ին կը հեռանայ Շամանիզմէ. Ջղաթայներու կայսրութեան մէջ Միւքարէք Շահը նոյնը կ'ընէ 1266-ին:

Այս դէպքը ունեցաւ կրկին նշանակութիւն: Իսլամութիւնը մինչեւ ԺԳ-րդի վերջը տարածուեցաւ այն բոլոր ժողովուրդներուն մէջ, որ այս երկու հարստութիւններուն հպատակ էին եւ կը բնակէին ռուսական երկրին մէջ մինչեւ Սոնգարիա, եւ Թիւրքիստանէն մինչեւ արեւմտեան Սիրերիա: Միանգամայն թրքութիւնը, որ արդէն թուով զերակշիռ էր Ձէնզիղի բանակին մէջ, առաջ անցաւ բեմին վրայ, շնորհիւ այն հանգամանքին, որ Արեւելեան Եւրոպայի եւ Միջին Ասիոյ թրքութեան եւ աշխարհակալ բանակներուն մէջ գտնուող թուրք զինուորութեան միջոցաւ էր որ տեղի ունեցեր էր մահմետականացումը:

Այնուհետեւ Իսլամութիւն ու թրքութիւն ձեռք ձեռքի տուած սկսան իւրացնել-ձուլիլ հպատակ Մոնղոլները:

Թէեւ Մոնղոլական արիւնը աւելի շատ էր Ջղաթայի քան Ջիւջիի յաջորդներուն մէջ,

բայց ասոնց մէջ ալ թրքացումը կատարուեցաւ մեծ յաջողութեամբ:

Ասոր լուազոյն օրինակն է Թիմուրը, ԺԴրդ դարու աշխարհակալը, որ թրքացուած մոնղոլ ցեղի մը կը պատկանի:

Երկրին իսլամացում ու թրքացումէն մինչեւ անոր Ռուսաստանի կողմէ նուաճումը*—որ ԺԹ-րդ դարու մէջ միայն լրացաւ — անցնող դարերը, Թիմուրեան շրջանի բացառութեամբ, շարունակական շղթայ մըն են քաղաքական անկումներու, հետեւանք՝ ներքին կռիւներու: Բայց բնակչութեան այսօրուան ազգաբարձան զիմագծի կազմութեան մէջ ունեցած են վրձնական նշանակութիւն:

ԺԵ-րդ դարու անկիւնադարձին, Գիրայիներու հարստութեան օրով, Ոսկի Բանակէն կ'անջատուի Խրիւմը, որ 1478ին կը մտնէ Օսմանցիներու թեւարկութեան տակ:

Գրեթէ միաժամանակ կ'անկախանայ Քազանը: Այսօրուան արեւմտեան Սիբերիոյ մէջ առաջ կուգան մէկէ աւելի խանութիւններ, որ ԺԶ-րդ դարուն միանալով կը կազմեն Սիբիրիական Խանութիւնը:

1481ին կը կործանի Ոսկի Հորդան, որ Իրաւահիմ Թիմէն Խանի հարուածներուն եւ Մոսկուայի դաշնակից Գիրայիներուն ճնշումին տակ կը կորսնցնէ հարաւային — ռուսական սթեփները եւ ետ կը մղուի դէպի Հաչտարխան: Ոսկի Հորդայի մի եւ ամբողջական թաթարութիւնը կը վերածուի փոքր պետութիւններու: Կեդրոնական Ասիայի սթեփային շրջանին մէջ 1500ի ատենները կ'անջատուին Էօգրէկներն ու Թիւրքմենները:

Առաջինները կը մտնեն հարաւային Թուրքիստան (նախկին Թրանսօքսիանա), կը նուաճեն գայն եւ կը ստիպեն Թիմուրեան հարստութեան պատկանող Բաքուր Խանը նահանջել:

*) 1380ին, Ոսկի Հորդայի վրայ տարած պատմական յաղթանակով (Քուլիբօլոյի ճակատամարտը) Ռուս Իշխաններու Դաշնակցութիւնը ջախջախեր էր Ալթին Օրդուի ոյժը եւ ազատագրեր ռուսական երկիրը թաթարական լուծէն: Անկէ վերջ, իր կարգին Ռուսաստան հետզհետէ յարձակողական դարձաւ: Զ.